

ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԶՈՒԳԱՇԵՌՆԵՐԸ

Բանալի բառեր՝ Հայաստանի ազգային գրադարան, տպագրության զարգացում, գրատպության պատմություն, տպարան, թվային գրադարան, էլեկտրոնային շտեմարան, տեղեկատվության հասանելիություն:

Keywords: National Library of Armenia, printing development, history of printing, printing house, digital library, electronic database, access to information.

Հոդվածի նպատակն է ցույց տալ այն հիմնական ուղղությունները, որոնցով զարգացել է տպագրությունը, ընդգծել զարգացման զուգահեռները՝ օգտագործելով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները: Այս նպատակի իրականացման համար ուշադրություն ենք դարձրել հետևյալ խնդիրներին:

Ուսումնասիրության սահմանափակ ծավալի շրջանակում ներկայացնել տպագրության ընդհանուր պատմությունը համառոտ ակնարկի ձևաչափով, առանձնացնել տպագրության զարգացման միտումները տարբեր դարերում, ընդգծել տպարանների ու տպագրիչների դերն ու նշանակությունը տպագրության ընդհանուր զարգացման գործում, առանձնացնել այլ տպագրական օջախների հետ ընդհանրություններն ու տարբերությունները, գտնել տպագրական արվեստի և հայկական ձեռագրերի միջև առկա նմանությունները, ցույց տալ տպագրված գրքերի վերաբերյալ աղբյուրները:

Հայ գրատպության պատմությունն ունի խոր արմատներ: Թե ինչ կարևոր դերակատարություն է ունեցել տպագրության գյուտն ընդհանրապես և որքան կարևոր է եղել այն հայ ժողովրդի համար, խոսվել է բազմիցս: Արդյունքն այն բազմաթիվ հոդվածներն ու ուսումնասիրություններն են, որոնք հարստացնում են մեր ընդհանուր գիտահետազոտական դաշտը:

Գիրքը՝ որպես տեղեկատվության փոխանցման կարևորագույն արժեք, գնահատված է եղել բոլոր ժամանակներում: Հասարակության պատմական զարգացմանը զուգահեռ՝ այն կատարել է տվյալ ժամանակահատվածի ձեռքբերումներն ապագա սերունդներին փոխանցելու բարդ գործառնություն, ինչը հնարավորություն է տվել ճիշտ գնահատելու անցյալը: Այս երևույթն առավել ընդգծվում է, երբ անդրադարձ ենք կատարում հայ գրքարվեստի պատմությանը: Թերևս աշխարհի ոչ մի ժողովրդի համար գիրքն ու տպագրությունը այն դերն ու նշանակությունը չեն ունեցել, ինչպես հայ ժողովրդի կյանքում:

Տարբեր դարաշրջաններում, երբ հայ ժողովուրդը գոյատևման համար կառչել է փրկության ակունքներից, գիրքը և գիրը հանդես են եկել իրենց ազգափրկիչ առաքելությամբ՝ ապագա սերունդներին ի պահ տալով պատմական փաստերը, գիտական ձեռքբերումները, գրական-գեղարվեստական պատկերացումները: Հայ գրքի պատմությունը զուգահեռվել է հայ տպագրության պատմությանը, ինչը Ռ. Իշխանյանի բնութագրմամբ հեղաշրջիչ է եղել մարդկության պատմության մեջ: Հայ գրատպության պատմությունն անցել է զարգացման տարբեր փուլերով, որի ընթացքում ձևավորվել են տպագրական արվեստի որոշակի սկզբունքներ: Յուրաքանչյուր դարաշրջան ինքնատիպության իր շեշտն է դրել հայ գրքարվեստի ձևավորման բարդ գործընթացում՝ հնարավորություն ընձեռելով հաջորդ սերունդներին կատարելագործելու տպագրության արվեստը: Նշենք, որ Գուտենբերգի գյուտը Գերմանիայից անցել է Իտալիա և Հոլանդիա (1465 թ.), Շվեյցարիա և Չեխիա (1468 թ.), Բելգիա և Իսպանիա (1473 թ.):

15-րդ դարի երկրորդ կեսին գրեթե ամբողջ Եվրոպայան տիրապետել էր տպագրության արվեստին:

Տպագիր գրքին զուգահեռ՝ ձեռագիր հայ գիրքը մինչև XVIII դարը ներառյալ շարունակել է գոյատևել և կատարել իր մշակութային դերը: XVI դարի երկրորդ տասնամյակից սկսվում է նոր շրջան հայ գրքի պատմության մեջ՝ տպագրության շրջանը: Որքան էլ որ ձեռագիր գիրքը շարունակել իր գոյությունը և զարգանար, այնուամենայնիվ, այն աստիճանաբար պետք է իր տեղը զիջեր տպագիր գրքին: Հայ ձեռագիր գիրքը կարևոր դերակատարություն է ունեցել հայ ժողովրդի բարոյական, կրոնական գաղափարների ձևավորման գործում: Այս առումով հայ տպագիր գրքի գործունեության շրջանակը առավել լայն է ու բազմաբովանդակ:

Հայ գրքի և տպագրության ուսումնասիրությամբ զբաղվել են բազմաթիվ մատենագետներ, գրականագետներ, բանասերներ, որոնցից առավել հայտնի են Գ. Զարբխանալյանը, Լեոն (Առաքել Բաբախանյան), Ա. Ղազիկյանը, Թեոդիկը (Թեոդորոս Լափչինճյան), Գ. Լևոնյանը, Ռ. Իշխանյանը, Հ. Դավթյանը, Ա. Բաբայանը և այլք:

Տպագրության գյուտը խոշորագույն երևույթ է եղել մարդկության կյանքում: Այն հսկայական բարերար ազդեցություն է ունեցել գիտության, գրականության, արվեստների զարգացման վրա: Ի տարբերություն եվրոպական ժողովուրդների՝ հայերը տպագրության գործը զարգացրել են ոչ թե հայրենի երկրում, այլ հայկական գաղութներում:

Տպարան հիմնադրելը բավականին ծախսատար է եղել: Տպագրիչների համար գլխավոր դժվարությունը տպագրական սարքավորումների ձեռք բերելն էր: Հայ տպագրիչների առջև ծառանում էր ևս երկու դժվարություն: Առաջին՝ հայկական միջավայրից հեռու հայ գաղութներում տպագրվելիք գրքերի հաջող բնագրային օրինակներ ձեռք բերելը, և երկրորդ՝ որ ամենադժվարին էր, հայերեն տառատեսակների պատրաստումը, քանի որ հայոց այբուբենը որևէ կապ չուներ լատինական և սլավոնական (կիրիլիցա) տառերի հետ: Եթե հաշվի առնենք, որ հայկական տպարանների գրաշարները հաճախ եղել են ոչ հայեր, ապա գրքերի շարվածքին հաջորդող տաժանելի աշխատանքը դառնում էր հայերեն չիմացող գրաշարների կատարած շարվածքը սրբագրելը: Նման գրաշարները շարվածքն իրականացնելիս առաջնորդվում էին ձեռագրերի գրերի և տպագիր տառերի արտաքին մեխանիկական նմանությամբ և ըստ ձեռագրերի հատ-հատ դնում և շարում էին տպատառերը առանց հասկանալու շարվածքի իմաստը, որը հանգեցնում էր շարվածքային բազմաթիվ սխալների և վրիպակների:

Ինչպես գիտենք, առաջին հայերեն գրքերը տպագրվել են Հայաստանի սահմաններից դուրս՝ Վենետիկ (1512), այնուհետև Կ. Պոլիս (1567), Հռոմ (1579), Լվով (1616), Միլան (1621), Փարիզ (1633), Նոր Զուլա (1638), Լիվոռնո (1644), Ամստերդամ (1660), Մարսել (1672), Զմյուռնիա (1678), Լոնդոն (1736), Էջմիածին (1771), Մադրաս (1772), Տրիեստ (1776), Պետերբուրգ (1781), Նոր Նախիջևան (1790), Աստրախան, (1796), Կալկաթա (1796) և այլ հայկական գաղութներում:

1771 թվականին ներկա ՀՀ տարածքում առաջին գիրքը տպագրվել է Էջմիածնում:

«Հայերեն առաջին տպագիր գրքերի բովանդակությունն արդեն վկայում է, որ հայ տպագրիչների և հրատարակիչների գլխավոր նպատակը նյութական շահը չէր, այլ այլալեզու և օտար միջավայրում ձուլման վտանգի առաջ կանգնած հային իր լեզվին ու ազգային ավանդույթներին ամուր շաղկապելու, մայրենի լեզվով գիր ու գրականություն մատուցելու ազգապահպանման վեհ ձգտումը» [Հայ գիրքը 1512-1800 թվականներին, 1988, 7]:

Մինչև 19-րդ դարը հայերեն գրքեր արդեն տպագրվում էին բոլոր այն վայրերում, ուր կար հայկական գաղթօջախ կամ հայկական շունչ: Ի վերջո, օգտագործելով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները՝ կոեսնենք տպագրությանը նվիրված էլեկտրոնային շտեմարանի կառուցվածքը, որը կարելի է կիրառել գրադարաններում: Ճիշտ է, տպագրությունն ընդգրկել է մի քանի դարի պատմություն, իսկ յուրաքանչյուր դարաշրջանում տպագրության արվեստը տարբերվել է նախորդից:

Ժամանակի հայ մտավորականները, հոգևոր գործիչները գիտակցում էին, որ տպագրության արվեստը հնարավորություն է հայ ժողովրդի հոգևոր ժառանգությունը հետագա սերունդներին փոխանցելու համար: Ոգևորված հայրենասնվեր զգացումներով՝ նրանք ջանում էին թղթին հանձնել դարերով ժառանգված մշակույթը, գիրն ու գրականությունը՝ նպաստելով հայ ժողովրդի գոյապայքարին:

19-րդ դարը տպագրության զարգացման, այլ գիտությունների ու տեխնիկայի համար խոշորագույն նվաճումների ու աննախընթաց վերելքի դար էր [Կորկոտյան, 1964, 53]: Գուտենբերգյան փայտյա ձեռնամեքենային փոխարինելու են գալիս ավելի բարդ, արագատիպ մեքենաներ, կատարվում է լուսանկարի գյուտը, տողատիպը և այլն: Բարձր կատարելության է հասնում թղթի արտադրությունը, պատրաստվում են ամեն տեսակի և որակի թղթեր: 19-րդ դարասկզբից կամաց-կամաց վերանում են գրքի վերջում դրվող հիշատակարանները, որոնցում տպագրիչները բազմազան տեղեկություններ էին հայտնում ինչպես տպարանի, այնպես էլ ժամանակի հասարակական, քաղաքական անցքերի մասին, բեռնաթափվում է գրքի անվանաթերթը:

20-րդ դարի վերջին և 21-րդ դարում գրադարանները որակական փոփոխությունների նոր դաշտ մտան: Փոխվեցին նրանց առաջադրված պահանջները, որոնք ստիպեցին վերանայել գրադարանային գործի առանցքային գործառույթները: Էական նշանակություն ունեցան տեղեկատվական տեխնոլոգիաները, որոնք ավելի լայն հնարավորություններ բացեցին գրադարանավարների համար: Թվային գրադարանները դարձան տեղեկատվության կուտակման և փոխանցման միջոցներ:

Թվային գրադարանը տեղեկատվության հավաքագրման, կուտակման և մատուցման լավագույն միջոցն է: Այստեղ թվային նյութերը մատչելի են հասարակության տարբեր շերտերին, առանց տեղի և ժամանակի սահմանափակումների:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման դարաշրջանում փոխվեցին նաև մատենագիտությանն առաջադրված պահանջները: Ավանդական մատենագիտական ցանկերի կողքին ի հայտ եկան էլեկտրոնային շտեմարանները, որոնք իրենց բովանդակությամբ և որոնողական ճկուն համակարգով նոր հնարավորություններ ստեղծեցին գրադարանավարների և ընթերցողների համար: Շտեմարանները տեղեկատվության տարածման մատենագիտական յուրօրինակ ցանկեր են՝ իրենց լայն հնարավորություններով և մատուցման մատչելի եղանակներով: Նրանք ոչ թե մերժում են ավանդական մատենագիտությունը, այլ մատենագիտական նյութի որոնման և մատուցման այլընտրանքային նոր տարբերակ են առաջարկում:

Այսօր աշխարհի գրեթե բոլոր գրադարաններն ունեն իրենց շտեմարանները՝ տարբեր բովանդակություններով, ձևաչափերով, ընդգրկվածությամբ: Յուրաքանչյուր գրադարան առաջարկում է իր ծառայությունները՝ աշխատելով ներգրավել առավել մեծ թվով ընթերցողների: Համընդհանուր թվայնացման դարաշրջանում ընդարձակվում են մատենագիտական նյութի որոնման հնարավորությունները, ինչն էլ հիմք է դառնում առավել ամբողջական շտեմարան ստեղծելու համար:

Հայաստանի Հանրապետության գրադարաններում էլեկտրոնային շտեմարանների ձևավորման աշխատանքները սկսվել են 21-րդ դարի սկզբից: Այժմ Հայաստանի ազգային գրադարանում ձևավորվում են բազմաթիվ թեմատիկ շտեմարաններ¹⁰.

1. Հայաստանի գրադարանների համահավաք գրացուցակ,
2. «Հայ գիրք» շտեմարան,
3. «Հայ մամուլ» շտեմարան,

¹⁰ Տե՛ս <https://nla.am/>, <https://nla.am/public/resources> 10.05.2024:

4. «Բանբեր Հայաստանի գրադարանների» գիտամեթոդական հանդես,
5. Հայաստանի ատենախոսությունների համահավաք պահոց,
6. ՀԱԳ թվային պահոց:

Այս համակարգը տալիս է նոր հնարավորություններ տեղեկատվության կազմակերպման և հանրահռչակման համար: Հայ գիրք շտեմարանի նպատակն է ապահովել գրադարաններում և այլ հասարակական ծառայության կառույցներում սեփական թվային գրադարանների ստեղծումը:

Հայաստանի ազգային գրադարանում այս ծրագրով ստեղծված տեղեկատու կամ տեքստային շտեմարաններն ունեն որոնողական ճկուն համակարգ: Նյութը որոնելի է՝ ըստ հեղինակի, վերնագրի, պարբերականի, բանալի բառի, տարեթվի, նյութի տեսակի, լեզվի, փնտրում հրամանով:

Շտեմարանները կառուցվում են հետևյալ ձևով.

1. HTML-ի համապատասխան դաշտերում մուտքագրվում են մատենագիտական տվյալները,
2. Տեղադրվում է տվյալ նյութի pdf տարբերակը՝ նյութն ընթերցելի դարձնելու համար,
3. Նյութը արխիվացվում է և հասանելի դառնում համացանցում:

Հայաստանի ազգային գրադարանը, կարևորելով հայ գրատպության գործուն դերը ժողովրդի ազգային ինքնության պահպանման գործում, ստեղծում է հնարավոր բոլոր պայմանները՝ հայ տպագիր գրքերը մեկ ընդհանուր դաշտում ամփոփելու և ներկայացնելու համար: Այստեղ կարևորվում են թվային գրադարանները, որոնք ավանդական գրադարանի համեմատ ունեն մի շարք առավելություններ: Հենց այդ առավելությունները հաշվի առնելով՝ Հայաստանի ազգային գրադարանը ձևավորում է տարաբնույթ էլեկտրոնային շտեմարաններ, որոնց շարքում առանձնանում է «Հայ գիրք» էլեկտրոնային շտեմարանը, որի ստեղծման աշխատանքները սկսվել են 2010 թվականից, իսկ 2012 թվականից՝ Հայաստանի ազգային գրադարանը դարձավ այդ նախագծի առաջատարը: Շտեմարանի ստեղծման սկզբունքը մեկն է՝ հայատառությունը: Շտեմարանի նպատակն է ամբողջական ներկայացնել հայ գրքի պատմությունը՝ տեսանելի դարձնելով պատմության հարցականները և օրինաչափ զարգացման պատկերը, հավաքագրել աշխարհով մեկ սփռված հայերեն կամ հայերեն հատվածներ պարունակող օտարալեզու գրականությունը, ճշտել աշխարհով մեկ սփռված գրքերի աշխարհագրական տարածքները՝ նշելով յուրաքանչյուր միավորի գտնվելու վայրը, ինչպես նաև ֆիզիկական վիճակը, պահպանելով հեղինակային իրավունքի նորմերը՝ թվայնացնել գրքերը՝ ընթերցողական լայն լսարանին ներկայանալու համար:

«Հայ գիրք» էլեկտրոնային շտեմարանում ներառված են 1512 թվականից մինչ այսօր աշխարհի տարբեր հատվածներում տպագրված հայերեն, հայատառ գրքերը, ինչպես նաև բազմալեզու հրատարակությունները, որոնց բնագրերը հայերեն են: Ներառված են ատլասներ, քարտեզներ, ժողովածուներ, հմայիլներ (միայն հնատիպ շրջան), պատկերագրքեր, բառարաններ, պատմական, գեղարվեստական, կրոնական, քաղաքական, մասնագիտական տարաբնույթ գրքեր: Շտեմարանը կառուցվում է հետևյալ սկզբունքով.

Կատարվում է գրքի մատենագիտական գրառում: Մատենագիտական նկարագրությունը հնարավորություն է տալիս ամփոփ տեղեկատվություն ստանալ գրքի տպագրության վայրի, տարեթվի, ստեղծողի, պատասխանատուների մասին: Մատենագիտական գրառման մեջ կարևորվում են բոլոր այն լրացուցիչ տեղեկությունները, որոնք հնարավորինս կոդավորված

նեն գիրքն ուսումնասիրելու և ընկալելու ընթերցողական պահանջները: Գրառումները հնարավորություն են տալիս կատարելու վիճակագրական վերլուծություններ:

Շտեմարանի ստեղծման հաջորդ սկզբունքը մատենագիտական յուրաքանչյուր գրառմանը թվային տարբերակի կցումն է՝ գիրքն առցանց ընթերցելու համար: Թվայնացման աշխատանքներն իրականացվում են Հայաստանի ազգային գրադարանում: Շտեմարանում թվային տարբերակները տեղադրվում են PDF ձևաչափով:

Ամենօրյա տքնաջան աշխատանքի արդյունքում այս շտեմարանները դառնում են ավելի ամբողջական:

Նրանցից յուրաքանչյուրը մշակութային առանձին միավոր է և արժեք, որի ուսումնասիրությունը և պահպանությունը խիստ կարևոր է հետագա հետազոտական աշխատանքի համար: Բացի դրանից, նրանցից յուրաքանչյուրն անցել է պատմական մի առանձին ուղի, որն արտացոլված է այդ գրքերի մեջ տեղ գտած ձեռագիր նշումներում, որոնց պահպանությունը ևս խիստ կարևոր է: Այդ պատճառով անհրաժեշտ է կազմել յուրաքանչյուր միավոր գրքի պատմական տեղեկանքը:

Անհրաժեշտ է ստեղծել առանձին մի շտեմարան, որը կընդգրկի տպագրված բոլոր գրքերի օրինակները՝ իրենց մատենագիտական նկարագրություններով և թվային տարբերակներով: Շատ կարևոր է, որ շտեմարանում, ինչպես նաև թղթային տարբերակում, ընդգծվեն տվյալ միավորի վերականգնման աշխատանքների բոլոր տվյալները: Նման տարբերակով մենք կունենանք այդ միավորի ամբողջական պատմությունը:

Ժամանակակից տեխնոլոգիաները լրիվ հնարավորություն են տալիս շարունակել ուսումնասիրությունները այս դաշտում:

SUMMARY

The book has always been valued as the most important value for the transmission of information. Along with the historical development of the society, it performed the complex function of transferring the achievements of the given period to the future generations, which made it possible to correctly assess the past. This phenomenon is more emphasized when we refer to the history of Armenian book art. Perhaps, for no people in the world, books and printing have had the same role and significance as in the life of the Armenian people.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Դերիկյան Վ. Լվովի հայկական տպագրության 400-ամյակը, Երևան, Տիգրան Մեծ, 2016, 133 էջ:
2. Կորկոտյան Բ. Հայ տպագիր գիրքը Կոստանդնուպոլսում (1567-1850 թթ.), Երևան, Ա. հ., 1964, 154 էջ:
3. Հայ գիրքը 1512-1800 թվականներին, Կազմ.՝ Ն.Ա. Ոսկանյան և ուրիշ., Խմբ.՝ Ռ.Ա. Իշխանյան, Երևան, ՀՍՍՀ Մյասնիկյանի անվ. գրադ., 1988, 864 էջ: